



Սր. Սարգիս
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻ

St. Sarkis
Armenian Church of D.F.W.

18 Ապրիլ, 1996

Գերաշնորհ
Տ. Խաժակ Ս. Արք. Պարսամեան, Առաջնորդ
Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Աթլանթայի Համայնքի Ծխական Խորհուրդի նախկին ատենապետ Սիմոն Տիպոյեանը ինչպէս նաեւ իր տիկինը Նէնսիմ, որ խորհրդականներէն մին էր ծխական խորհուրդին, Մայիսի սկիզբը Լաս Վեկաս պիտի փոխադրուին: Այս առթիւ ճաշկերոյթ մը կազմակերպած ենք իրենց երկար տարիներու նուիրեալ ծառայութեան համար թէ իբրեւ տնտեսներ եւ թէ իբրեւ ծխական խորհուրդի անդամներ, Շարաք, 27 Ապրիլի երեկոյեան:

Կը խնդրենք որ Օրհնութեան Գիր մը դրկէ՛ք առ ի գնահատանք այս զոյգին երկար տարիներու զոհողութեան եւ ծառայութեան համար Աթլանթայի Հայց-Եկեղեցւոյ համայնքէն ներս: Կարելի է Հայերէն եւ կամ Անգլերէն գրել Գիրը: Եթէ Անգլերէն պիտի գրուի, պէտք է ըլլայ.- SIMEON AND NANCY DIBOYAN:

Մատչիմ ի համրոյր Ձեր սուրբ աջոյն:

Յարգանքով


Ներսէս Ա. Քենյ. Ճէպէնեան
Հովիւ